

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս Շահակայ Կորճեի, որ եկաց ի տեղի Չաւենայ գլուխ եպիսկոպոսաց:

2 Ապա Շահակ Կորճեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Չաւենայ յետ մահու նորա ամս երկուս: 3 Եւ էր սա այր քրիստոնեայ, բայց ոչ ինչ գչարեցաւ ընդ կարգս Չաւենայ՝ զոր եղեալն էր նորա՝ փոխել. սակայն առաջնորդեաց սա ամս երկուս, եւ փոխեցաւ յաշխարհէ:

ԳԼՈՒԽ Դ.

1 Յաղագս Ասպուրակայ Մանազկերտացոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ:

2 Ապա յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի գաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի, այր քրիստոնեամիտ աստուածապաշտ արդար. եւ առաջնորդեաց դրանն խոսրովու: 3 Բայց միայն վասն կրաւնիցն հանդերձոյն զեղեալ կարգն ըստ կրաւնիցն Չաւենայ գնային սոքա:

ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս Փաւստեայ եւ Չորթայ եպիսկոպոսաց:

2 Էր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս. սա ի ժամանակս Ներսեսի եպիսկոպոսապետին՝ էր ի տան նորին իբրեւ թելակալ: 3 Սոյնպէս Չորթ այր ներքինի ընդ նոսին. քանզի էին ի ներքնի հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր, գործակիցք եւ խորհրդակիցք: 4 Թող զայլոց գաւառաց ամենայն եպիսկոպոսեանն՝ որ ընդ նովաւ. այլ երկոքեան սոքա յայնց երկոտասանիցն: 5 Եւ էին սոքա ի տեսչութիւն աղբատանցացն հաւատացեալք, եւ յամենայնի էին հաւատարիմք նորա ի ժամանակս նորա, եւ յամս խոսրովու եւ Արշակայ երկուց թագաւորացն բաժանաւորացն, մինչ դեռ եւս կային սոքա կենդանիք:

ԳԼՈՒԽ Զ.

1 Յաղագս Առոստոմայ եղբար Փաւստեայ եպիսկոպոսին:

2 Եւ էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, կրաւնագգեաց մենակեաց անապատակեաց լեռնական սքանչելի: 3 Եւ էին լեալ սոքա ազգաւ Յոռոմ. այլ այրս այս մեծաւ վարեալք շրջեր զամենայն աւուրս կենաց իւրոց: 4 Եւ էր սա բնակեալ յարայրատեան գաւառին, եւ վարեր նա Յոգուով Սրբով. շրջեր սա յանապատս մաշկահանդերձ ճարակաւոր ի լերինն մինչեւ յար հանգստեան իւրոյ: 5 Ապա հանկեաւ սա. եւ բերին յանապատէն զմարմին սորա,